Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

2015 թվականի գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
ՆՊԱՏԱԿ I. Կառավարում և վարչարարություն 6
ՆՊԱՏԱԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր 14
ՆՊԱՏԱԿ III. Որակի ապահովում 22
ՆՊԱՏԱԿ IV. Հետազոտություն 23
ՆՊԱՏԱԿ V. Միջազգային կապեր 25
ՆՊԱՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր 27
ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 29
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 31

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան 70 տարեկան է

Անցած 2015 թվականը հոբելյանական տարի էր Գեղարվեստի ակադեմիայի համար: Նշվեց Ակադեմիայի հիմնադրման 70 ամյակը: Հոբելյանը պատեհ առիթ էր մի հետահայաց ընդհանուր անդրադարձ անելու բուհի հիմնադրման պատմությանը, նրա զարգացման փուլերին, անցած տարիների դժվարություններին և ձեռքբերումներին, ինչպես նաև մեկ անգամ ևս փաստելու գեղարվեստական կրթության կարևորությունն ու պահանջը մեր երկրի հասարակական կյանքում: Դրա վկայությունն է Ակադեմիայի հիմնադրման տարեթիվը՝ Հայրենական մեծ պատերազմի ավարտից անմիջապես անց՝ 1945 թվական: Երախտագիտությամբ պետք է նշել, բուհի հիմնադրման ակունքներում կանգնած արվեստագետներին՝ մասնավորապես երկու նշանավոր անձանց՝ Արա Սարգսյանին և Մարտիրոս Սարյանին, և առաջին կազմի դասախոսներին՝ Գաբրիել Գյուրջյան, Հակոբ Կոջոյան, Եղիշե Մարտիկյան, Բաբկեն Քոլոյան, Ռուբեն Դրամբյան, Էդուարդ Իսաբեկյան, Արա Բեքարյան, Սերգեյ Արուտչյան, Արփենիկ Նալբանդյան՝ հայ կերպարվեստի ականավոր վարպետներ, որոնց ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ կայացնել բուհական գործընթացները: Կրթական ընդհանուր մեթոդների յուրովի մոտեցման շնորհիվ ձևավորվեցին ազգային մշակույթի վրա հիմնված այնպիսի ավանդույթներ, որոնք ժամանակի ընթացքում ոչ միայն չնահանջեցին, այլ որոշակի փոփոխություններ կրելով, պահպանեցին արդիական նշանակությունը և այսօր էլ կիրառելի են:

Գեղարվեստի ակադեմիան՝ համընթաց ժամանակի պահանջներին, նորարարական առաջադեմ և հանրության շահերից բխող ծրագրերի ու գաղափարների ջատագովն ու կրողն է, ինչն էլ պայմանավորում է գեղարվեստական կրթության այս ոլորտում Ակադեմիայի առաջատար տեղը մեր երկրում: Հոբելյանի առիթով, ինչպես նաև մշակույթի բնագավառում ներդրած նշանակալի ավանդի և երկարամյա գիտամանկավարժական գործունեության համար ակադեմիայի բազմաթիվ աշխատակիցներ պարգևատրվեցին՝ «Մովսես Խորոնացի» մեդալով, ՀՀ Վարչապետի հուշամեդալով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով», ՀՀ Մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» և «Ոսկե մեդալով», Վարչապետի ,ԿԳ և Մշակույթի նախարարությունների շնորհակալագրերով և պատվոգրերով: Այս պարգևները և նվիրյալ աշխատանքի գնահատականն են և միաժամանակ է՛լ ավելի պարտավորեցնող:

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվությունում ներկայացվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ԵԳՊԱ) 2015 թվականին իրականացրած գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի համաձայն ԵԳՊԱ առաքելությունը իր մեջ ներառում է հետևյալ 3 հիմնական ուղղությունները.

- կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը,
- ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:

Առաքելությանը համապատասխան՝ 2015 թվականի ԵԳՊԱ-ի գործունեությունը միտված էր առաջընթաց գրանցելու հետևյալ հիմնական ուղղություններով.

- ԵԳՊԱ- ի կառավարման համակարգի բարելավում,
- ԵԳՊԱ-ի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերանայում, ուսանողակենտրոն ուսուցման որդեգրում՝ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքային մոտեցման միջոցով,
- ԵԳՊԱ-ի կողմից տրամադրած կրթության միջազգային ճանաչում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն»-ի (ՀՀ) և «ԱՍԻԻՆ»

հավատարմագրման գործակալության (Գերմանիա) համատեղ ինստիտուցիոնալ մակարդակով միջազգային հավատարմագրում,

- Հետազոտության ուղղությունների վերանայում, հստակեցում և հետագա զարգացում,
- Ծառայություն հասարակությանը՝ ցուցահանդեսների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպման ու նախապատրաստական և ֆակուլտատիվ դասընթացներ տրամադրելու միջոցով,
- ԵԳՊԱ ուսանողների ուսուցմանը նպաստող միջավայրի բարելավում,
- ԵԳՊԱ-ի միջազգայնացում:

Վերը նշված ուղղությունները զարգացնելու նպատակով 2015 թվականին ԵԳՊԱ-ում մշակվել և մշակման փուլում են գտնվում մի շարք նոր կարգեր և այլ փաստաթղթեր՝ միտված բուհի կառավարման համակարգի, ուսումնական գործընթացի և ուսումնական միջավայրի բարելավմանը, ուսանողների շարժունության ապահովմանը, ինչպես նաև ԵԳՊԱ-ի գրավչության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականը ԵԳՊԱ-ի համար կարելի է բնութագրել որպես հաջողությունների տարի, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել բազմաբնույթ բարեփոխումներ իրականացնելու համար, ինչպես նաև ակադեմիայի կառավարման նոր մոտեցումների և որակի մշակույթի ձևավորման գործում:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ ԵԳՊԱ 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի և ռեկտորի 2013 թվականի ընտրության հայեցակարգում նշված դրույթների:

ՆՊԱՏԱԿ I. Կառավարում և վարչարարություն

Արդյունավետ կառավարումը բուհի հաջողությունների կարևորագույն գրավականներից է: Բոլոնիայի գործընթացին անդամակցությամբ պայմանավորված միջազգային մակարդակում ՀՀ կրթությունը տեսանելի դարձնելու ձգտումը անհնար է դարձնում կառավարման հին մոտեցումների կիրառումը: Համալսարանների կառավարման արդիականացումը կրթական բարեփոխումների կայացման կարևոր նախապայմաններից մեկն է: Ինքնավարությունն ի սկզբանե կարևոր դեր է խաղացել Եվրոպայի Համալսարանների Ասոցիացիաի (ԵՀԱ) հռչակագրերում: Առաջնային է համարվում 2001 թվականին ընդունված Սալամանկայի հռչակագիրը: Սալամանկայի հռչակագրով կարևորվեց համալսարանական ինքնավարությանը նպաստող քաղաքականության մշակման անհրաժեշտությունը և առաջարկվեցին դրան ուղղված հետևյալ հիմնական սկզբունքները.

- Հաշվետվողականությամբ և թափանցիկությամբ ուղեկցվող համալսարանների ինստիտուցիոնալ ինքնավարություն,
- հասարակական պատասխանատվության վրա հիմնված կրթություն,
- հետազոտական աշխատանքների վրա հիմնված բարձրագույն կրթության խթանում:

Ինստիտուցիոնալ ինքնավարություն ասելով, առաջին հերթին հասկացվում է ակադեմիական, կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության ազատականացում: Բուհերին այսօր անհրաժեշտ է ակադեմիական ինքնավարություն՝ իրենց բնականոն գործունեությունը կազմակերպելու համար: Անհրաժեշտ է ունենալ նաև ֆինանսավորման բավարար և կայուն աղբյուրներ, ինչը հնարավոր կդարձնի մրցակցության մեջ մտնել եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

Այսօր ՀՀ բարձրագույն կրթության առջև դրված հիմնական խնդիրը՝ Եվրոպական տարածաշրջանում մրցունակ, բարձր որակի մասնագետների պատրաստումն է: Այս խնդրի լուծումը Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից պահանջում է արդի

լաբորատորիաների և արվեստանոցների, միջազգային և տեղական լայն կապերի ու համագործակցության, կերպարվեստի և դիզայնի ոլորտում արդի զարգացումներին ծանոթ, վերապատրաստված բարձր մակարդակի պրոֆեսորադասախոսական կադրերի առկայություն: Դժվարությունը կայանում է նրանում, որ ակադեմիայի ֆինանսական սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս զգալի նախնական ներդրում պահանջող նշված բնագավառներում ապահովել շոշափելի զարգացում և այս խնդրի լուծման համար ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են անհրաժեշտ: Միևնույն ժամանակ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կազմակերպաիրավական կարգավիճակը հնարավորություն չի ընձեռում ձեռնարկատիրական գործունեություն ծավալել կամ որևիցե այլ ձևով արտաքին ներդրողների ներգրավել:

Նշված և այդ կարգի այլ սահմանափակումները վերացնելու նպատակով քայլեր են ձեռնարկվել ակադեմիայի ՊՈԱԿ կազմակերպաիրավական կարգավիճակը հիմնադրամի վերակազմակերպելու ուղղությամբ.

- Հարցը քննարկվել է կառավարման խորհրդի նիստում և ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորումը և կառավարման խորհրդի արձանագրությունը ուղարկվել են ՀՀ ԿԳՆ:
- Մշակվել և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության նախագիծը, ինչպես նաև հիմնադրամին հատկացվող անշարժ գույքի ցուցակը, որոնք 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ ԿԳՆ-ի կողմից դրվել են շրջանառության մեջ՝ դրանցում առաջարկություններ և դիտողություններ կատարելու նպատակով:

ԵԳՊԱ-ն կարևորագույն քայլեր է ձեռնարկել բուհի կառավարումը արդիականացնելու և այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ.

Կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավման նպատակով մշակվել և ներդրվել են ԵԳՊԱ վարչական ստորաբաժանումների, դեկանատների և ամբիոնների գործունեությունը ԵԳՊԱ 2012-2016թթ. ռազմավարական ծրագրին համապատասխան պլանավորելու (ներառյալ անհրաժեշտ ռեսուրսները) և եռամսյակային ու տարեկան հաշվետվությունների ձևաչափերը (ներառյալ կատարողականի ցուցիչները): Պլանավորման

ձևաչափերի ներդրումը հնարավորություն տվեց առավել արդյունավետ կազմակերպել ակադեմիայի գործունեությունը, տեսանելի դարձնելով, որ այն ամբողջությամբ ուղղված է ռազմավարական նպատակների իրականացմանը: Հենց այդպիսին պետք է լինի իրական արդյունավետ կառավարման համակարգը: Տարեկան պլաններում կատարողականի ցուցիչների ներգրավումը և հաշվետվությունների նոր ձևաչափերը հնարավորություն կտան ճշգրիտ գնահատել ստորաբաժանումների, դեկանատների և ամբիոնների աշխատանքի ծավալը և արդյունավետությունը: Գնահատման ցուցիչների միջոցով կատարված աշխատանքները առավել տեսանելի դարձնելու արդյունքում կբարձրանա հաշվետվողականության մակարդակը: Վերոնշյալի արդյունքում ԵԳՊԱ-ում կձևավորվի կառավարման և հաշվետվողականության նոր մշակույթ:

2015 թվականը երկրորդ տարին է, ինչ ԵԳՊԱ-ն համակարգում և իրականացնում է «Կառավարում» դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որի շրջանակներում Եվրոպական մի շարք առաջատար բուհերի հետ համագործակցության շնորհիվ արդիականացվում են կառավարման մոտեցումները: Ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ի Եվրոպական գործընկերներն են.

- Լյուվենի համալսարանը (Բելգիա),
- Բաֆ Սպա համալսարանը (Մեծ Բրիտանիա),
- Կոբլենց-Լանդաուի համալսարանը (Գերմանիա),
- ԱՍԻԻՆ հավատարմագրման գործակալությունը (Գերմանիա)

«Կառավարում» ծրագրի նպատակն է փոփոխություններ իրականացնել բուհի կառավարման երեք մակարդակներում՝

- ○ կառավարման վերին օղակ, վարչակազմ,
- ○ դեկաններ և ամբիոնների վարիչներ,
- ○ ուսումնական վարչություն:

«Կառավարում» ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում ակնկալվում է նաև ԵԳՊԱ-ի համատեղ հավատարմագրումը ՀՀ և Գերմանական հավատարմագրման գործակալությունների կողմից: Հավատարմագրման գործընթացը հաջողությամբ ավարտելու

դեպքում ԵԳՊԱ-ն կստանա և՝ ՀՀ «Որակի ապահովման ազգային կենտրոնի» և՝ Գերմանիայի «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալության հավատարմագրումները: Դա կարևորագույն նվաճում կլինի, քանզի դրա արդյունքում կապահովվի ԵԳՊԱ-ի կրթության ճանաչումը ՀՀ-ում և Եվրոպայում:

Ակտիվ գործունեություն է ծավալում 2013 թվականին ստեղծված «Մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման» կենտրոնը: Կենտրոնի աշխատանքների շրջանակներում ներդրվում է «Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը», որը տեղեկատվության հավաքագրման հուսալի միջոց է: Այս համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ ճիշտ ժամանակին հավաքագրված և արժանահավատ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար:

«Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ում զետեղված տվյալները ժամանակին թարմացնելու և այդ համակարգում չընդգրկված, սակայն վերլուծություններ կատարելու համար անհրաժեշտ ավելի ամբողջական տեղեկատվություն հավաքագրելու նպատակով մշակվում է նաև ԵԳՊԱ տվյալների բազայի նախագիծ: Այդ տվյալների բազայի ներդրումը կապահովի էլեկտրոնային ֆորմատով տեղեկատվության հավաքագրումը ԵԳՊԱ-ի բոլոր ստորաբաժանումներից: ԵԳՊԱ տվյալների բազան մշակման ընթացքում է:

Տեմպուսի «ՀԵՆ-ԳԵԱՌ» ծրագրի շրջանակներում ստեղծվել և կիրարկվում է ԵԳՊԱ շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորման և ապահովման էլեկտրոնային հարդակը, որի բազայում արդեն իսկ գրանցված են 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների 97% (238 շրջանավարտ) և 2014-2015 ուսումնական տարվա շրջանավարտների 84% (140 շրջանավարտ և գրանցումը դեռ շարունակվում է):

Բացի այդ, ակտիվ աշխատանքներ են տարվել դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ՝ միտված անձնակազմի տարբեր մակարդակների ներուժի զարգացմանը: 2015 թվականի դրությամբ ԵԳՊԱ-ն մասնակցել է Տեմպուսի վեց ծրագրերի, որոնցից մեկի ղեկավարն է հանդիսանում: Դրանք են.

- **ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (GOVERN).** միտված է Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան բուհերի կառավարման համակարգի վերանայմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	Ռազմավարական և կառուցվածքային կառավարման վերապատրաստում	Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	Մայիսի 12-14, Երևան, ՀՀ
2	GOVERN ծրագրի կառավարման խորհրդի 2-րդ նիստ	Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	Մայիսի 12, Երևան, ՀՀ
3	Ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստում	ՀԱՀ,	Հունիսի 8-12, Երևան, ՀՀ

- **ՊԻԿԱՍԱ (PICASA).** միտված է բուհի տարբեր գործընթացների միջազգայնացմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	Կայացել է միջազգայնացման թեմայով աշխատաժողով և կոնֆերանս	Երևանի պետական համալսարան	16-20 նոյեմբեր, Երևան, ՀՀ

- **ՎԵՐԻՏԱՍ (VERITAS).** միտված է Զալցբուրգի սկզբունքների հիման վրա Որակավորումների ազգային շրջանակ-ի 8-րդ մակարդակի (հետազոտող) կառուցվածքային զարգացմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող	Վայրը և ամսաթիվը

		հաստատությունը	
1	Սեմինար հետազոտական կրթության որակի ապահովման չափանիշների և չոփորոշիչների վերաբերյալ	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	26-27 հունվար, Երևան, ՀՀ
2	Սեմինար հետազոտական կրթության որակի ներքին և արտաքին ապահովման վերաբերյալ	Երևանի պետական համալսարան	11-13 մայիս, Երևան, ՀՀ
3	Ճանաչողական այց եվրոպական գործընկեր հաստատություններ հետազոտական կրթական ծրագրի մշակմանը և իրականացմանը ծանոթանալու նպատակով	Շվեդիայի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ Բաֆ սպայի համալսարան Ջիրոնայի համալսարան Հայդելբերգի համալսարան	14-29 նոյեմբեր Ստոկհոլմ, Շվեդիա, Բաֆ, Մեծ Բրիտանիա, Ջիրոնա, Իսպանիա Հայդելբերգ, Գերմանիա

- **ԸԼԱՅՆ (ALIGN).** միտված է մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության խթանմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1.	Ծրագրի կոորդիացիոն և կառավարման խորհրդի հանդիպում	Ադամ Միկիևիչի համալսարան	14-18 հունիս, Պոզնան, Լեհաստան
2.	Աշխատաժողով և վերապատրաստում մասնագիտական կրթության ծրագրերի մշակման և ՈԱՇ-ին	Երևանի գեղարվեստի պետական	09-11 նոյեմբեր, Երևան, ՀՀ

	համապատասխանեցման վերաբերյալ	ակադեմիա Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	
3.	Ծրագրի արդյունքների տարածման համաժողով և ծրագրի համակարգման հանդիպում	Մոսկվային Շոլոխովի անվան պետական հումանիտար համալսարան	12-15 նոյեմբեր, Մոսկվա, ՌԴ

- **ՀԵՆ-ԳԵԱՌ (HEN-GEAR).** միտված է շրջանավարտների և գործատուների միջև կապի ձևավորմանը և ապահովմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1	HEN-GEAR ծրագրի եզրափակիչ համաժողով	Երևանի պետական համալսարան	29 Հոկտեմբերի, ք. Երևան, ՀՀ
2	Շրջանավարտների հարցման արդյունքները և իրավիճակը աշխատաշուկայում: Ծրագրի կառավարումը	Լաս Պալմասի համալսարան	7-8 Հուլիսի Լաս Պալմաս, Իսպանիա
3	HEN-GEAR ծրագրի հետազոտող խմբի հանդիպում: Ծրագրի կայունությունը և կառավարումը	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	9 Ապրիլի, ք. Երևան, ՀՀ
4	HEN-GEAR ծրագրի տեղեկատվական հանդիպում գործատուների և համալսարանների կարիերայի կենտրոնների հետ	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների /գործատուների/	27 Փետրվարի, ք. Երևան, ՀՀ

		միություն	
5	HEN-GEAR ծրագրի տեղեկատվական հանդիպում և կառավարման խորհրդի նիստ	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	20 Հունվարի, ք. Երևան, ՀՀ

- **ԷՍՊԱՔ (ESPAQ).** միտված է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավածության բարձրացմանը: 2015 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

N	Թեմա	Կազմակերպող հաստատությունը	Վայրը և ամսաթիվը
1.	Ծրագրի համակարգման 2-րդ ժողով	Սպիրու Հարետ Համալսարան	Հոկտեմբերի 20-21, Բուխարեստ, Ռումինիա
2.	Կոնֆերանս “Ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում “	Հայաստանի Ճարտարապետների միություն	Հոկտեմբերի 26-28, Երևան, ՀՀ
3.	Որակի ապահովման սեմինար	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	Նոյեմբերի 23-25, Երևան, ՀՀ

Ինչպես երևում է, Տեմպուսի բոլոր վեց ծրագրերը միտված են բուհի տարբեր ոլորտներում կառավարման զարգացմանը և բարեփոխումների խթանման համար լավագույն միջոց են:

ՆՊԱՏԱԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2015-2016 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է ըստ ԵԳՊԱ-ի մասնագետների կողմից մշակված և ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2015-2016 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է ըստ «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: 2015-2016 ուսումնական տարվա ԵԳՊԱ դիմորդների բաշխումը ըստ մասնաճյուղերի հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	147
Գյումրի	35
Դիլիջան	7
Ընդամենը	**189**

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	52
Գյումրի	5
Ընդամենը	**57**

Մրցույթի արդյունքում 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	48	90	138
Գյումրի	11	24	35
Դիլիջան	5	1	6
Ընդամենը	**64**	**115**	**179**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	20	16	36
Գյումրի	3	2	5
Ընդամենը	**23**	**18**	**41**

2015 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ԵԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	182	412	594
Գյումրի	47	106	153
Դիլիջան	15	6	21
Ընդամենը	**244**	**524**	**768**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	38	49	87
Գյումրի	5	5	10
Ընդամենը	**43**	**54**	**97**

Վերջին երեք տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Դիմորդների և ընդունվածների բաշխումը ըստ մասնաճյուղերի և ուսումնական տարիների

Բակալավրի կրթական ծրագիր						
	2013-2014		2014-2015		2015-2016	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	185	177	157	142	147	138
Գյումրի	43	40	45	42	35	35
Դիլիջան	5	4	7	6	7	6
Ընդամենը	***233***	***221***	***209***	***190***	***189***	***179***

Մագիստրոսի կրթական ծրագիր						
	2013-2014		2014-2015		2015-2016	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	108	72	99	58	52	36
Գյումրի	8	7	5	5	5	5
Ընդամենը	***116***	***89***	***104***	***63***	***57***	***41***

Ուսանողների ընդհանուր թիվը ըստ մասնաճյուղերի և ըստ կարգավիճակի (պետ. պատվեր / վճարովի)

Բակալավրի կրթական ծրագիր									
	2013-2014			2014-2015			2015-2016		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	187	424	611	196	374	570	182	412	594
Գյումրի	34	94	128	43	92	135	47	106	153
Դիլիջան	11	14	25	13	8	21	15	6	21
Ընդամենը	***232***	***532***	***764***	***252***	***474***	***726***	***244***	***524***	***768***

Մագիստրոսի կրթական ծրագիր									
	2013-2014			2014-2015			2015-2016		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	41	100	141	42	81	123	38	49	87
Գյումրի	5	13	18	4	8	12	5	5	10
Ընդամենը	***46***	***113***	***159***	***46***	***89***	***135***	***43***	***54***	***97***

ԵԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թիվը ըստ մասնաճյուղերի

	2013-2014	2014-2015	2015-2016
Երևան	752	693	681
Գյումրի	146	147	163
Դիլիջան	25	21	21
Ընդամենը	***923***	***861***	***865***

Բ. Ուսումնական գործընթաց

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ հարկ է նշել, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Հատկապես.

- «Դիզայն», «Հագուստի մոդելավորում», «Համակարգչային գրաֆիկա» և «Կիրառական արվեստ» մասնագիտությունների ուղղությամբ, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մակարդակում մշակվել են նոր արդյունահեն կրթական և առարկայական ծրագրեր: Մշակված ծրագրերը քննարկվել են Իռլանդիայի «Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիայի ինստիտուտ»-ից ժամանած փորձագետների հետ և ստացվել դրական արձագանք: Սակայն առկա էին նաև որոշ դիտողություններ, որոնք կվերացվեն 2016 թվականի ընթացքում:
- Կատարվել են ԵԳՊԱ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ կրթական ծրագրերի և ուսումնառության արդյունքների մշակման վերաբերյալ:

- Մշակվել է «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ը:

Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների հիման վրա վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը, գնահատման համակարգը և մշակված ընթացակարգերը՝ մշակվել և տպագրվել է ուսանողի ձեռնարկ:

Գ. Ուսումնական միջավայրի բարելավում

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ֆինանսական միջոցների և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՀՀ նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում «Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ենթածրագրերի սահմաններում ստացված միջոցների հաշվին 2015 թվականի ընթացքում վերանորոգվել և նորագույն սարքավորումներով ամբողջովին վերազինվել են ակադեմիայի «Հագուստի մոդելավորման», «Համակարգչային գրաֆիկայի» և «Խեցեգործության» լաբորատորիաները: Նոր լաբորատորիաների պայմանները և արդի սարքավորումները ամբողջովին համապատասխանում են ժամանակի պահանջներին և լավագույնն են ոչ միայն Հայաստանում այլ նաև տարածաշրջանում:

Դ. Որակավորումներ

2014-2015 ուսումնական տարում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան, Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերը ավարտել են 171 շրջանավարտ, որոնցից 103-ը բակալավրի կրթական աստիճանով և 68-ը մագիստրոսի կրթական աստիճանով: Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները գրանցել են ԵԳՊԱ-ի շրջանավարտների բավական բարձր մակարդակը, ինչը արտահայտվում է ավարտական ատեստավորման արդյունքներով.

Բակալավրի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	16	10	6	-	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	17	14	3	-	-	-	-	-
Համակարգչային գեղարվեստական նախագծում	8	4	4	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	5	4	1	-	-	-	-	-
Քանդակագործություն	10	8	1	1	-	-	-	-
Գեղանկար	18	12	2	4	-	-	-	-
Գրաֆիկա	9	6	3	-	-	-	-	-
Կերպարվեստի պատմություն և տեսություն	7	1	4	2	-	-	-	-
Ընդամենը	**90**	**59**	**24**	**7**	**-**	**-**	**-**	**-**
Գյումրու մասնաճյուղ								
Հագուստի մոդելավորում	2	2	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	3	-	-	-	-	3	-	-
Գեղանկարչություն	1	1	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	3	2	-	1	-	-	-	-
Ընդամենը	**9**	**5**	**-**	**1**	**-**	**3**	**-**	**-**
Դիլիջանի մասնաճյուղ								
Կիրառական արվեստ	4	4	-	-	-	-	-	-
Ընդամենը	**4**	**4**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***103***	***68***	***24***	***8***	***-***	***3***	***-***	***-***

Մագիստրոսի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	9	5	1	3	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	15	11	4	-	-	-	-	-
Համակարգչային գեղարվեստական նախագծում	13	9	4	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	5	4	1	-	-	-	-	-
Քանդակագործություն	5	5	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	4	2	1	1	-	-	-	-
Գրաֆիկա	5	4	1	-	-	-	-	-

Կերպարվեստի պատմություն և տեսություն	6	6	-	-	-	-	-	-
Ընդամենը	**62**	**46**	**12**	**4**	**-**	**-**	**-**	**-**
Գյումրու մասնաճյուղ								
Հագուստի մոդելավորում	1	1	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	4	4	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	1	1	-	-	-	-	-	-
Ընդամենը	**6**	**6**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***68***	***52***	***12***	***4***	**-**	**-**	**-**	**-**

* Անցողիկ գնահատականներ՝ A (90%-100%), B (80%-89%), C (70%-79%), D (65%-69%), E (60%-64%): Անբավարար՝ FX (մինչև 59%): Չներկայացած՝ W:





Իրականացվող մասնագիտությունները Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ԵԳՊԱ-ում շարունակում են գործել մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայող հանձնախմբեր, որոնք զբաղվում են ուսումնառության վերջնարդյունքների մշակմամբ: Այդ հանձնախմբերի աշխատանքների շրջանակը ենթադրում է ՄԿԾ-ների վերանայում և շուկայի պահանջներին ու ՈԱՇ-ին համապատասխանեցում: Այդպիսի մոտեցումը կերաշխավորի ԵԳՊԱ-ի և մասնաճյուղերի կողմից առաջարկվող մասնագիտությունների ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցումը ՈԱՇ-ին, ինչը դյուրին կդարձնի բուհի ինտեգրումը Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին:

Դ. Լրացուցիչ ծառայություններ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնական կրթական ծրագրերից զատ իրականացնում է նախապատրաստական դասընթացներ ապագա դիմորդների և բոլոր այն քաղաքացիների համար, ովքեր ցանակություն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում: 2015 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված են եղել շուրջ 50 մասնակից:

Հիմնական կրթական ծրագրից բացի ԵԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև հայերեն լեզուներով: Ֆակուլտատիվ դասընթացներում 2015 թվականի ընթացքում ներգրավված են եղել շուրջ 143 ուսանող:

ՆՊԱՏԱԿ III. Որակի ապահովում

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից իրականացվող գործընթացները արդյունավետ կատարելու և առաջին հերթին որակյալ կրթություն տրամադրելու նպատակով ԵԳՊԱ-ում շարունակվում է որակի ապահովման համակարգի մշակումը և ներդրումը: Մշակվել և փորձարկումների փուլում է գտնվում «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի ապահովման ուղեցույց»-ի նախագիծը, որում ներառված են ԵԳՊԱ-ի որակի ապահովման քաղաքականությունը, ոլորտները, ինչպես նաև որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացներն ու գործիքները: ԵԳՊԱ-ի որակը բարելավելու նպատակով գործում են ինքնավերլուծություն իրականացնող խմբեր, որոնք ինքնավերլուծության նոր գործընթաց են սկսել համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի № 959-Ն որոշմամբ հաստատված «Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ»-ի: Ինքնավերլուծության աշխատանքներն արդյունավետ և հավաստի իրականացնելու նպատակով որակի ապահովման կենտրոնն անցկացրել է մի շարք հարցումներ՝ շահակիցների շրջանում ակադեմիայի աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար: Մասնավորապես.

- Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում դասախոսների կողմից
- Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում ուսանողների կողմից
- «Կոմպոզիցիա» դասընթացի դասավանդման մեթոդների գնահատում
- ԵԳՊԱ ծառայությունների և ռեսուրսների արդյունավետության գնահատում դասախոսների կողմից
- ԵԳՊԱ ծառայությունների և ռեսուրսների արդյունավետության գնահատում ուսանողների կողմից

Վերը նշված աշխատանքների արդյունքում ստացված ինքնավերլուծության զեկույցը վերջնականացնելու արդյունքում 2016 թվականին նախատեսվում է դիմել ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն և Գերմանիայի «ԱՍԻԻՆ» հավատարմագրման գործակալություն համատեղ հավատարմագրում իրականացնելու նպատակով:

ՆՊԱՏԱԿ IV. Հետազոտություն

Հետազոտության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են բավական լուրջ աշխատանքներ: ԵԳՊԱ-ի դասախոսների կողմից հայաստանյան և միջազգային գիտական ժողովածուներում և հանդեսներում հրատարակել են շուրջ 80 գիտական հոդվածներ, հրատարակվել է 2 մենագրություն: Կազմվել և տպագրության ընթացքում է ԵԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների հերթական ժողովածուն, որում ընդգրկված են 29 գիտական հոդվածներ, այդ թվում՝ 5 ասպիրանտի և 3 մագիստրոսի:

Ակադեմիան 2104 թվականից մասնակցում է ՏԵՄՊՈՒՍ-ի VERITAS «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 բարձրագույն ուսումնական հաստատություններ և կրթական կառույցներ ինչպես Հայաստանից, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներից: Ծրագրի շրջանակներում արվեստագիտության ոլորտի առանձնահատկությունների հիման վրա կատարվել է վերլուծություն, մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ՝ հետազոտողի ծրագրի բարելավման ուղղությամբ: Հետազոտվել են Շվեդիայի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի, Մեծ Բրիտանիայի Բաֆ սպայի համալսարանի, Իսպանիայի Ջիրոնայի համալսարանի և Գերմանիայի Հայդելբերգի համալսարանի բարձրագույն կրթության 3-րդ մակարդակի կրթական ծրագրերը: Ուսումնասիրությունների հիման վրա 2016 թվականին պետք է լրամշակվի ԵԳՊԱ ասպիրանտական կրթական ծրագիրը:

ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվել է Հայ ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հանդիպումներ» դասախոսությունների շարք, որի շրջանակներում բացի ԵԳՊԱ դասախոսներից, դասախոսություններ է կարդացել Երուսաղեմի Եբրայական համալսարանի պատվավոր պրոֆեսոր, ճանաչված հայագետ, հայագիտության միջազգային ասոցիացիայի հիմնադիր նախագահ Մայքլ Սթոունը՝ «Երուսաղեմի հայ համայնքը» թեմայով:

Գիտության պետական կոմիտեից գրանտային ֆինանսավորում ստանալու համար առաջին անգամ մշակվել և ներկայացվել է դրամաշնորհային ծրագիր: Դրամաշնորհային ծրագրերի մրցույթների արդյունքները դեռ չեն հայտարարվել:

Ակադեմիան մշակույթի ոլորտում միջազգային կապեր է հաստատել ինչպես առանձին մասնագետների, այնպես էլ հետազոտական մի քանի կենտրոնների հետ: Մասնավորապես, նախնական համաձայնություններ են ձեռք բերվել Իտալիայի Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի, Ֆրանսիայի Էքս-են-Պրովանս համալսարանի հայ արվեստի և ճարտարապետության ամբիոնի և Սորբոնի EPHE դպրոցի բյուզանդական արվեստի ամբիոնի հետ Համատեղ ասպիրանտական և հետազոտական ծրագրերի իրականացման շրջանակներում համագործակցության վերաբերյալ:

Արդեն 2-րդ տարին է ինչ «Աշխարհայացքների պատմություն» առարկայի շրջանակներում ԵԳՊԱ է հրավիրվում և 1 ամբողջ կիսամյակի ընթացքում դասախոսություններ է կարդում Իտալիայի փիլիսոփայական գիտությունների դոկտոր, արվեստագետ՝ Լեոնարդո Ֆիլաստոն:

Ընթացիկ տարում ակադեմիայի արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի մի շարք դասախոսներ զեկուցումներով հանդես են եկել Ֆրանսիայում, Արևմտյան Հայաստանում, Վրաստանում և Երևանում կազմակերպված միջազգային գիտաժողովներում:

2015 թվականը արդյունավետ է եղել նաև երիտասարդ հետազոտողների համար:

Արվեստբանություն մասնագիտության 2 մագիստրոսներ զեկուցումներով հանդես են եկել Երևանի պետական և Վանաձորի պետական մանկավարժական համալսարաններում կազմակերպված Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված ուսանողական գիտական նստաշրջաններում: Նույն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Համբարձումյանը Հունգարիայում մասնակցել է ուսանողական միջազգային հնէաբանական գիտաժողովի: Ակադեմիայի 2 ասպիրանտներ մասնակցել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում և Մատենադարանում կազմակերպված երիտասարդ արվեստաբանների գիտաժողովների:

Ակադեմիայի 2 ասպիրանտ (այդ թվում 2-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրանց շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ներկայում ակադեմիայում սովորում է 4 ասպիրանտ և 3 հայցորդ:

ՆՊԱՏԱԿ V. Միջազգային կապեր

Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով մշակվել է՝ «ԵԳՊԱ փոխանակման ծրագրերով արտասահմանյան գործընկեր բուհեր մեկնող ուսանողների շարժունության կարգ»-ի նախագիծը, որը կհաստատվի 2016 թվականի առաջին եռամսյակում: 2015 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել է նաև «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ը:

Համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել՝ Հունգարիայի Պետեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի և Հայ – Չինական համագործակցության կենտրոնի հետ:

Վերջին երեք տարիների ընթացքում դիտվող արտասահմանցի դիմորդների հոսքի նվազեցման տեմպերը զգալի նվազել են, սակայն դեռ պահպանվում են: 2014 թվականի համեմատ 2015 թվականին արտասահմանցի ուսանողների թիվը նվազել է 5-ով:

Ընդհանուր առմամբ, 2015-16 ուս.տարվա արտասահմանցի ուսանողները կազմում են 6 %, որից 2.5%-ը Ասիայից, 2.5%-ը՝ ԱՊՀ երկրներից, 0.5%-ը՝ Եվրոպայից և 0.5%-ը Չինաստանից:



Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ ուսանողների փոխանակումը հիմնականում ընթանում է Ֆրանսիական ուսումնական հաստատությունների (Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց, Լիմոժի արվեստի և դիզայնի ազգային

բարձրագույն դպրոց), Իտալիայի ուսումնական հաստատությունների (Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա, Պերուջիայի համալսարան), Հունգարիայի Պետեր Պազմանի անվ կաթոլիկ համալսարանի և Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվ. գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայի հետ, գործող ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում: 2015-16 ուս. տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում, նշված համաձայնագրերի շրջանակներում, ուսումը շարունակելու նպատակով 3 ուսանող մեկնել է Մարսելի արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց (Ֆրանսիա), 3-ը՝ Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա (Իտալիա), 5-ը՝ Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (Ռուսաստան), 1-ը՝ Հունգարիայի Պետեր Պազմանի անվ կաթոլիկ համալսարան և 1-ը՝ Լիմոժի արվեստի և դիզայնի ազգային բարձրագույն դպրոց:

Փոխանակման ծրագրերով Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում մեկ կիսամյակ սովորել են Լվովի արվեստի ակադեմիայի 2 ուսանող:

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ գործում են պայմանագրեր արվեստի օտարերկրյա 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:

Կարևոր միջոցառումների թվին կարելի է դասել նաև արդեն ավանդական դարձած ճապոնացի արվեստագետ, պրոֆ. Կունիտո Նագաոկայի գլխավորությամբ կազմակերպված վորքշոփը և Նորատուսում կազմակերպված վարպետության դասընթացները՝ նվիրված խաչքարերի սիմվոլների պատճենահանման տեխնիկային:

2015 թվականին Տեմպուսի «ՊԻԿԱՍԱ» ծրագրի շրջանակներում մշակվել է Միջազգային կապերի բաժնի 2015-2017 թվականների ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական ծրագրում ներառված է իրավիճակի վերլուծությունը, առաքելությունը և աշխատանքային պլանը ներառյալ՝ նախատեսված գործողությունները, պատասխանատուները, վերջնաժամկետները և հնարավոր խոչընդոտները:

ՆՊԱՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերի ոլորտում 2015 թվականի ընթացքում իրականացվել են ավելի քան 50 ցուցահանդեսներ ու միջոցառումներ՝ ԵԳՊԱ-ում, Գյումրու ու Դիլիջանի մասնաճյուղերում և այլ վայրերում: Դրանցից հատկապես կարևոր է նշել.

1. **Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնադրման 70-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները:** ԵԳՊԱ-ի հիմնադրման 70 ամյակի կապակցությամբ Ազգային պատկերասրահում կայացած հանդիսավոր արարողություն ու դասախոսների, ուսանողների և շրջանավարտների ցուցահանդեսներ Նկարիչների միությունում և ԵԳՊԱ պատկերասրահում:

2. **ԵԳՊԱ-ում և մասնաճյուղերում կայացած 2014-2015 ուս. տարվա շրջանավարտների դիպլոմային աշխատանքների ցուցահանդեսը:** Գեղանկարչություն, Գրաֆիկա, Քանդակագործություն, Դիզայն, Համակարգչային գեղարվեստական նախագծում և Կիրառական արվեստ մասնագիտությունների շրջանավարտների դիպլոմային աշխատանքների ցուցահանդես և Հագուստի մոդելավորման մասնագիտության շրջանավարտների դիպլոմային աշխատանքների հավաքածուի դեֆիլե (ցուցադրությունը) ՀՀ Նկարիչների միության սրահում:

3. **«Մի կտոր կրակ» ցուցահանդեսը:** Հայաստանի նկարիչների միությունում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողական խորհուրդի կողմից կազմակերպված ԵԳՊԱ-ի ուսանողների ցուցահանդես, որի բացմանը ներկա է եղել Վարչապետ Հովիկ Աբրահամյանը:)

4. **Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի «Ալբեր եւ Թովե Բոյաջեան» ցուցասրահում կազմակերպված ցուցահանդեսները:** Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոսներ՝ Ավետիք Ավետիսյանի, Վարդան Պողոսյանի, Աշոտ Հարությունյանի, Տաթև Հարթենյանի, Անի Աճառյանի անհատական ցուցահանդեսները: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գեղանկարի, քանդակի, գրաֆիկայի ԵԳՊԱ ուսանողական ցուցահանդեսը: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի և

Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի ուսանողների համատեղ ցուցահանդես-միջոցառումը:

5. **«ԱՆՑՅԱԼԸ ԿԱՆՉՈՒՄ Է – THE PAST IS CALLING»… պլակատների ցուցահանդեսը:** Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված ԵԳՊԱ ուսանողների պլակատների ցուցահանդես, որը կայացավ՝ ԵԳՊԱ «Ալբեր եւ Թովէ Բոյաջեան» ցուցասրահում, Կոմիտասի պուրակում և Կասկադ համալիրում:

6. **Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի հիշատակին նվիրված՝ ԵԳՊԱ-ի Հետազոտական կենտրոնի ու Արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի կազմակերպած «Հանդիպումներ» միջոցառումների շարքը:**

ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2014 թվականից ՀՀ-ում ներդրվեց բուհերի ազգային վարկանիշավորման համակարգը, որի նպատակներն են.

- բարձրացնել բուհերի միջև մրցակցությունը և դրանց հաշվետվողականությունը;
- ընդլայնել բուհական համակարգի շահառուների՝ ուսանողների, դիմորդների, գործատուների և այլ սոցիալական խմբերի, բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորությունները և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ;
- բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների ընդունման արդյունավետությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Վարկանիշավորումը իրականացվում է ըստ բուհերի գործունեության հետևյալ ուղղությունների՝ ուսանողներ, ուսումնառության արդյունքներ, միջազգային ուղղվածություն, գիտահետազոտական աշխատանք, դասավանդման գործընթաց, հաստատության կարողություններ, աշխատանքային շուկա, հանրային կապեր:

ՀՀ բոլոր պետական և մասնավոր բուհերը բաժանվում են 6 խմբերի: Դրանք են՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր

5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
6. Արվեստի բուհեր

ԵԳՊԱ-ն հանդիսանալով ՀՀ կերպարվեստի ոլորտի առաջատար բուհ ընդգրկվել է 6-րդ վարկանիշային խմբում և վարկանիշավորման արդյունքներով, արդեն երկրորդ տարին է զբաղեցնում է **1-ին տեղը**:

2015 թվականից սկսած կատարվում է նաև բուհերի ընդհանուր վարկանիշավորում, որտեղ միասնական չափանիշներով գնահատվում են բոլոր պետական և մասնավոր բուհերը՝ անկախ դրանցում իրականացվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների թվից: Ընդհանուր վարկանիշում, որտեղ մասնակցել են ՀՀ-ում բարձրագույն կրթություն իրականացնող 55 հաստատություններ ԵԳՊԱ-ն զբաղեցրել է **13-րդ տողը:** Հաշվի առնելով ակադեմիայի փաքր չափերը (տարածք, ֆինանսավորում, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի թիվաքանակ) դա շատ բարձր արդյունք է:

Նշված արդյունքները վկայում են վերջին տարիների գործունեության բարձր որակի և կրթության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունավետության մասին: Վարկանիշավորման չափանիշներին և արդյունքներին կարելի է ծանոթանալ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքէջերում՝ http://ranking.armedu.am/ և http://rank.armedu.am/:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով պետական հաստատություն և ձևավորելով բյուջեն թե՛ պետական և թե՛ հասարակության կողմից տրամադրվող ֆինանսներից՝ ԵԳՊԱ-ն այդ ֆինանսները բաշխելիս հաշվետու է հասարակությանը և կառավարությանը:

2015 թվականին ԵԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ. բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ԵԳՊԱ-ի ծախսերը կատարվում են ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով ամբիոններից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, քաղաքից դուրս էտյուդների կազմակերպման համար:

ՄՈՒՏՔԵՐ **468.164.172 ՀՀ դրամ**

1	Պետական բյուջե	205.878.000	44%
2	Ուսանողների վճարներ	227.000.000	48.5%
3	Նախապատրաստական դասընթացներ	11.000.000	2.3%
4	Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում	20.581.630	4.4%
5	Այլ մուտքեր	3.704.542	0.8%



ԾԱԽՍԵՐ **509.106.814 ՀՀ դրամ**

1	Աշխատավարձ	389.000.000	76.4%
2	Պետական հարկեր	2.757.000	0.54%
3	Գնումներ	5.208.000	1.02%
4	Ծառայություններ	90.712.000	17.82%
5	Գործուղում	5.179.814	1.02%
6	Կրթաթոշակ	15.000.000	2.95%
7	Այլ ծախսեր	1.250.000	0.25%



Ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար 2015 թվականին ԵԳՊԱ-ի մասնաշենքերում կատարվել են շենքի պահպանման աշխատանքներ, ԵԳՊԱ-ն համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու մասնաճյուղի ֆինանսատնտեսական գործառությունները իրականացվում են համաձայն տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում

անհրաժեշտ ծախսեր են՝ աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 82.2%-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաները, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարումներ են կատարվում գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում է, որ մասնաճյուղն իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:

Միջազգային աղբյուրներից ստացված ֆինանսավորում

2015 թվականի ընթացքում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան ֆինանսավորվել է միջազգային երկու աղբյուրից՝ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՀՀ նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի և Եվրոմիության «Տեմպուս» դրամաշնորհային ծրագրի սահմաններում:

ՄՈՒՏՔԵՐ **46.017.004 ՀՀ դրամ**

1	«Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ծրագիր	5.845.735	12.7%
2	Տեմպուս	40.171.269	87.3%

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՀՀ նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում 2015 թվականի դրությամբ ԵԳՊԱ-ում իրականացվող «Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ենթածրագրերի սահմաններում ԵԳՊԱ-ի ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ **5.845.735 ՀՀ դրամ**

1	«Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ծրագիր	5845735

ԾԱԽՍԵՐ **5.702.386 ՀՀ դրամ**

1	**Եվրոինտեգրում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում» ծրագիր**		
1.1	Խորհրդատվություն և աշխատավարձ	537.980	10%
1.2	Լաբորատոր սարքավորումներ և գրենական պիտույքներ	3.717.386	65%
1.3	Նյութերի թարգմանում և տպագրություն	1.447.020	25%



ԵԳՊԱ-ում իրականացվող «ԳՈՎԵՌՆ», «ՎԵՐԻՏԱՍ», «ԸԼԱՅՆ», «ՊԻԿԱՍԱ», «ԷՍՊԱՔ» և «ՀԵՆ-ԳԵԱՌ» Եվրոմիության ՏԵՄՊՈՒՍ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2015 թվականի ընթացքում ֆինանսական մուտքերը և ծախսերը հետևյալն են.

ՄՈՒՏՔԵՐ **40.171.269 ՀՀ դրամ**

1.	ԳՈՎԵՌՆ	19.837.934	50%
2.	ՎԵՐԻՏԱՍ	2.414.289	6%
3.	ԸԼԱՅՆ	6.873.680	17%
4.	ՀԵՆ-ԳԵԱՌ	2.497.105	6%
5.	ԷՍՊԱՔ	8.548.261	21%



ԾԱԽՍԵՐ **24.285.657 ՀՀ դրամ**

1.	**ԳՈՎԵՌՆ**		
1.1	Ճանապարհածախս	3.879.438	15.97%

2.	**ՎԵՐԻՏԱՍ**		
2.1	Ճանապարհածախս	1.778.459	7.32%
2.2	Աշխատավարձ	6.309.794	25.98%
3.	**ԸԼԱՅՆ**		
3.1	Ճանապարհածախս	1.158.563	4.77%
3.2	Աշխատավարձ	5.715.116	23.53%
4.	**ՊԻԿԱՍԱ**		
4.1	Ճանապարհածախս	55.548	0.24%
5.	**ՀԵՆ-ԳԵԱՌ**		
5.1	Աշխատավարձ	1.829.000	7.53%
5.2	Տպագրություն	1.519.000	6.25%
5.3	Գրենական պիտույքներ	701.000	2.89%
6.	**ԷՍՊԱՔ**		
6.1	Ճանապարհածախս	1.339.739	5.52%



ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այսպիսով, կարելի է նշել, որ 2015 թվականը եղել է բավականին արդյունավետ թե կառավարման համակարգի, և թե ուսումնական գործընթացի բարելավման տեսանկյունից: ԵԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման ուղղությամբ:

Սակայն, բավականին լուրջ մարտահրավեր են առաջանում, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Չնայած արտաքին աղբյուրներից ռեսուրսների ձեռքբերման հարցում ԵԳՊԱ-ի բոլոր ջանքերին՝ դեռ առկա են շոշափելի խնդիրներ հիմնականում հետևյալ հարցերում՝

- ԵԳՊԱ-ի ֆիզիկական տարածքի վերանորոգում և համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- շենքային պայմանների ընդլայնում:

Ամփոփելով՝ ԵԳՊԱ-ն միշտ պատրաստակամ է և անընդատ ձգտում է բարելավել ուսումնագիտական ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: